# ՆՈՒՅՆ ՈՐՈՇՅԱԼԻՆ ԼՐԱՑՆՈՂ ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ԲԱՌՈՎ ԵՎ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ

ՄԽԻԹԱՐՅԱՆ Ա. Մ.

Նախադասության նույն անդամին կարող են լրացնել շարահյուսական նույն պաշտոնը կատարող մեկից ավելի անդամներ, հետևաբար միևնույն որոշյալը կարող է ունենալ մեկից ավելի որոշիչներ, որոնք շարահյուսական նույն պաշտոնը կատարող բազմակի (համասեռ) կամ տարասեռ անդամներ են: Նրանք իրար չեն լրացնում. գտնվում են համադասական հարաբերության մեջ և կապվում են թվարկման հնչերանգով:

Նախադասության համասեռ որոշիչները նույնաբնույթ են և ցույց են տալիս միևնույն տեսակի առարկաները միմյանցից տարբերակող հատկա-նիշը կամ առարկայի մի քանի հատկանիշներ միանգամից: Տարասեռ որոշիչները, չնայած որ նույն անդամի լրացում են դառնում, նույնաբնույթ չեն և արտահայտում են տարբեր սեռային հասկացություններ[1]: Այսպիսով՝ համասեռ որոշիչները բազմակի որոշիչներ են, իսկ տարասեռ որոշիչները այդպիսին չեն համարվում: Օրինակ՝ Երբեմն միայն ծառերից վեր երևում էր *կապույտ, մթնակապույտ երկնքի* մի շերտ և իսկույն չքանում (ԶՍ, 55): Դա *հայոց երկու լեռնաշխարհները*՝ Արցախն ու Սյունիքը, միացնող ամենակարճ ճանապարհն էր (ԽՍ, 3): Առաջին օրինակում որոշիչները բազմակի են, քանի որ նույն բնույթն ունեն, իսկ երկրորդում՝ ոչ, որովհետև լրացումներից մեկը ցույց է տալիս լրացյալի քանակը, մյուսը՝ վերաբերությունը:

Բազմակի որոշիչներ*:* Նախադասության բազմակի անդամները համադասական բառակապակցություններ չեն կազմում, չնայած որ մի շարք բազմակի անդամներ կրել են փոփոխություններ, և տեղի է ունեցել բառիմաստի կայունացում: Այս փոփոխության շնորհիվ դրանք մոտեցել են բառակապակցությանը՝ ստանալով անվանողական գործառույթ[2]: Օրինակ՝ հայր ու մայր – ծնողներ, այր ու կին - ամուսիններ, այրուձի – հեծելազոր, տունուտեղ – ունեցվածք և այլն:

Բազմակի որոշիչները լրացնում են նախադասության անդամ հանդիսացող որևէ գոյականի կամ գոյականաբար գործածված անդամի: Բազմակի անդամները, տվյալ դեպքում որոշիչները, հանդես են գալիս միասնաբար և նույն շարահյուսական դերով, պատասխանում են նույն հարցին և նույնաբնույթ են: Սրանք կարող են լինել երկանդամ կամ բազմանդամ՝ ըստ բաղադրիչների քանակի: Բազմակի որոշիչները որոշ դեպքերում հնարավոր է փոխակերպել: Օրինակ՝

Եվ քո *թաց, վճիտ, ցողոտ աչքերում* Եվ քո *աչքերում, որ թաց են,*

---

[1] Տե՛ս **Գյուլբուդաղյան Ս.,** Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1988, էջ 210-211:

[2] Մանրամասն տե՛ս **Ճշմարիտյան Ժ.,** Դերբայական դարձվածը արդի հայերենում, Ե., 1961, էջ 16:

| | |
|---|---|
| | *որ վճիտ են, որ ցողոտ են,* |
| Լույսի ճաճանչներ ճախրելով անցան (ՉԵ, 8): | Լույսի ճաճանչներ ճախրելով անցան: |

Բոլոր բազմակի որոշիչների միաժամանակյա փոխակերպման հետևանքով ստացվում են բարդ համաստորադասական նախադասություններ:Ստորադաս նախադասությունները գերադասի հետ կարող են կապակցվել որևէ հարաբերական բառով: Կապակցական բառն անընդհատ չկրկնելու նպատակով, կարելի է միայն առաջին նախադասությունը կապակցել հարաբերականով, իսկ մյուսները՝ *և, ու* և այլ շաղկապներով: Այս երևույթը կոչվում է միասնական ստորադասում նույն հարաբերական դերանվամբ[3]: Գերադաս նախադասության մեջ կարող է հարաբերյալ ավելանալ: Օրի-նակ՝ Շրջակայքի ամբողջ դատարկության մեջ տիրում էր *սպանիչ, անապատական տխրություն* (Ր, 318): Շրջակայքի ամբողջ դատարկության մեջ տիրում էր *այնպիսի տխրություն, որ սպանիչ էր, որ անապատական էր:* Դիմացը միայն *սարն* էր՝ *լերկ ու քարակարկառ* (ԶՍ, 77): Դիմացը միայն *սարն* էր, *որ լերկ էր ու քարակարկառ:* Բազմակի որոշիչները կարող են արտահայտված լինել թե՛ միայն բառերով, թե՛ միայն բառակապակցություններով, թե՛ այս երկուսի զուգակցումով:

Բառով արտահայտված բազմակի որոշիչներ՝ Ես չեմ սիրում *համր ու հանդարտ առուները* դաշտավայրի (ՍՀ, 203): Ես չեմ սիրում դաշտավայրի *առուները, որոնք համր են ու հանդարտ:*

Բառակապակցությամբ արտահայտված բազմակի որոշիչներ՝ Նա *փոքրիկ հասակով, թուխ դեմքով, նեղ ճակատով, տափակ մազերով, հի-վանդոտ աչքերով* մի *էակ* էր (Շ, 92): Նա մի *էակ* էր, *որը փոքրիկ հասակով էր, որը թուխ դեմքով էր, որը նեղ ճակատով էր, որը տափակ մազերով էր, որը հիվանդոտ աչքերով էր:* Այսպիսի փոխակերպումները նպատակահարմար չեն և կարող են ունենալ միայն հետազոտական և ուսուցողական բնույթ:

Ասվեց, որ կապակցական բառն անընդհատ չկրկնելու նպատակով, կարելի է միայն առաջին նախադասությունը կապակցել հարաբերականով, իսկ մյուսները՝ *և, ու* և այլ շաղկապներով, սակայն օրինաչափությունը պահպանելու նպատակով փորձել ենք շարահարությամբ (հնչերանգով, գրավոր խոսքում ստորակետերով տրոհվող) միավորված բազմակի որոշիչները փոխակերպել շարահարական բարդ նախադասության, իսկ որևէ համադասական շաղկապով (միավորիչ, հակադրական, տրոհական)՝ մենադիր և կրկնադիր, միավորված բազմակի որոշիչները՝ զոդվածավոր բարդ նախադասության:

Բառով և բառակապակցությամբ արտահայտված բազմակի որոշիչներ՝ Ներսից դուրս եկավ *միջահասակ* մի տղամարդ՝ *գլխաբաց, երկար սև բեղերով և մաքուր կապա հագած* (ԶՍ, 124): Ներսից դուրս եկավ մի տղամարդ, որը *միջահասակ էր, որը գլխաբաց էր, որը երկար սև բեղերով էր և մաքուր կապա էր հագել:*

[3] **Գարեգինյան Գ.,** Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1984, էջ 91:

Բազմակի որոշիչները կարող են լինել նախադաս, հետադաս կամ խառը, այսինքն՝ որոշիչների մի մասը կարող է դրվել որոշյալից առաջ, մյուսը մասը՝ հետո: Փոխակերպելիս դրանք բոլորն էլ դառնում են վերջադաս ստորադաս նախադասություններ: Նախադաս որոշիչները, անկախ իրենց քանակից, ներփակվում են որոշյալով: Օրինակ՝ Սառը ձյունը այրում էր նրա *բարալիկ ու նիհար մատները* (ԱՎ, 50): Սառը ձյունը այրում էր նրա *մատները, որ բարալիկ էին ու նիհար:*

Հետադաս որոշիչների և որոշյալի միջև կապը թույլ է, և դրանք կազմում են աններփակ շարքեր: Օրինակ՝

| | |
|---|---|
| Սքանչելագործ բյուր հրաշքներից | Սքանչելագործ բյուր հրաշքներից |
| Գեղեցկագույնը՝ ողջ տիեզերքում, | Գեղեցկագույնը՝ ողջ տիեզերքում, |
| Մարդուս ***աչքերն*** են՝ *իմաստուն, անբիծ* (ԴՎ, 77): | Մարդուս *աչքերն* են, *որ իմաստուն են, որ անբիծ են:* |

Խառը շարադասությամբ բազմակի որոշիչները փոխակերպելիս դառնում են վերջադաս ստորադաս նախադասություններ: Բազմակի որոշիչները, ըստ փոխակերպելիության, լինում են երեք տեսակ՝ ա) փոխակերպվող. բ) ոճական անհարթությամբ փոխակերպվող. գ) չփոխակերպվող:

Բազմակի որոշիչները փոխակերպելիության միասնություն են հանդես բերում, այսինքն՝ մտնում են միևնույն խմբի մեջ: Այս ամենը ակնհայտ է ստորև բերված օրինակներում: Օրինակ՝ Դուրս եկավ մի *կարճահասակ, հաստլիկ մարդ՝ փաթաթված բաբորի և սամույրի մեջ* (Ր, 82): Դուրս եկավ մի *մարդ, որը կարճահասակ էր, որը հաստլիկ էր, որը փաթաթվել էր բաբորի և սամույրի մեջ:* Նար իշխանը *հիսունն անց տղամարդ* էր՝ *բարձրահասակ, տակավին ձիգ ու պինդ կազմվածքով* (ԶՍ, 12): Նար իշխանը *այնպիսի տղամարդ* էր, *որ հիսունն անց էր, որ բարձրահասակ էր, որ տակավին ձիգ ու պինդ կազմվածքով էր:* Մի *ճերմակ ամպ, թափանցիկ ու անձև,* հանդարտ լողում էր լազուրի մեջ (ԲԱ, 51): Մի *ամպ, որ ճերմակ էր, որ թափանցիկ էր ու անձև,* հանդարտ լողում էր լազուրի մեջ: Չորացած տերևներն անհանգիստ խմբվում էին *այս ու այն անկյունում,* թպրտում հուսահատ և անմռունչ պառկում սև գուբի մեջ (ԲԱ, 47): Վերջին օրինակի *այս ու այն* որոշիչները չեն փոխակերպվում, քանի որ արտահայտվել են ցուցական դերանուններով, որոնք փոխակերպելի չեն:

Բազմակի որոշիչները միավորվում են. ա) որևէ համադասական շաղկապով (միավորիչ, հակադրական, տրոհական)՝ մենադիր և կրկնադիր (*և, ու, թե, կամ, բայց, սակայն, և՛…և՛, ո՛չ…ո՛չ, թե՛…թե՛, կա՛մ…կա՛մ, ո՛չ միայն…այլև* և այլն). բ) առանց շաղկապի՝ հնչերանգով (գրավոր խոսքում տրոհվում են ստորակետերով): Երբ նախադասության բազմակի որոշիչները երկուսից ավելի են, կարող են միավորվել վերոհիշյալ երկու եղանակներով միաժամանակ. նման դեպքերում շաղկապը դրվում է հիմնականում վերջին անդամից առաջ: Օրինակ՝

| | |
|---|---|
| Ուզում եմ նայել ինձ ու աշխարհին | Ուզում եմ նայել ինձ ու աշխարհին |
| *Լիացա՛ծ, ժպտո՛ւն ու գո՛հ աչքերով* (ՍՊ, 141): | *այնպիսի աչքերով, որ լիացա՛ծ են, որ ժպտո՛ւն են ու գո՛հ:* |

Շաղկապով միավորված բազմակի որոշիչները փոխակերպելիս շաղկապը կարող է չպահպանվել, կարող է պահպանվել՝ դրվելով ստորադաս բաղադրիչ նախադասությունների միջև:

Եվ, ու շաղկապներով միավորված բազմակի որոշիչներ՝ Չնայած *քարոտ ու փշոտ ճանապարհին՝* նրանք ներքուստ ուրախ էին ու հանգիստ (ԶՍ, 76): Չնայած *ճանապարհին, որը քարոտ էր ու փշոտ,* նրանք ներքուստ ուրախ էին ու հանգիստ:

Շաղկապով միավորված բազմակի որոշիչները ներփակ խումբ են կազմում: Եթե այդ անդամը երկանդամ է, ներփակումը կատարվում է առանց թվարկման, իսկ եթե բազմանդամ է, ներփակումը կատարվում է վերջին անդամով՝ թվարկվելով մինչև վերջին անդամը: Օրինակ՝ Տղաները բոլորը նման էին *հորը՝ բարձրահասակ ու թիկնեղ* (ԶՍ, 11): Տղաները բոլորը նման էին *հորը, որը բարձրահասակ էր ու թիկնեղ:* Ով սիրտ ունի, ոտքերի ջլերը պինդ են, իջնում է կեռմաններով, թափահարում թթենին, և քարերի վրա թափվում է *սպիտակ, սև ու կարմիր թութը* (ԲԱ, 111): Ով սիրտ ունի, ոտքերի ջլերը պինդ են, իջնում է կեռմաններով, թափահա-րում թթենին, և քարերի վրա թափվում է *թութը, որ սպիտակ է, որ սև ու կարմիր է:*

Եթե շաղկապով միավորված բազմակի որոշիչները բառական մի ամբողջություն չեն կազմում, ներփակ խումբ չեն համարվում, այլ նրանց բազմակիությունն արտահայտվում է առանձին-առանձին[4]: Օրինակ՝ Այսպիսով մենք անցնում էինք *մեծ ու փոքր, քարոտ ու լերկ բլուրներով* (Մ, 246): Այսպիսով մենք անցնում էինք *բլուրներով, որոնք մեծ ու փոքր էին, որոնք քարոտ ու լերկ էին:* Կային հազար գույնի *ձիեր՝ որձ և էգ, ծանրած և ծեր, քուռակներով և դեռ անծին, թամբած և մերկ* (ԲԱ, 83): Կային հազար գույնի *ձիեր, որ որձ և էգ էին, որ ծանրած էին և ծեր, որ քուռակներով էին և դեռ անծին, որ թամբած էին և մերկ:* Առաջին նախադասությունն ունի երկու ներփակ խումբ, իսկ երկրորդը՝ չորս, որոնք փոխակերպվումեն առանձին-առանձին և իրար նկատմամբ համազոր հարաբերության մեջ են:

Բայց շաղկապով միավորված բազմակի որոշիչներ՝ Նրա *քիչ խենթ, բայց երազկոտ աչքերի մեջ* նշմարվում էին կենդանության նշույլներ: Նրա *աչքերի մեջ, որոնք քիչ խենթ էին, բայց երազկոտ,* նշմարվում էին կենդանության նշույլներ: Դեմ դիմաց կանգնած էր մի *տղամարդ՝ ծանոթ ժպիտով, ժամանակի ճերմակ փոշուց սպիտակած մազերով, բայց երիտասարդական առույգ կեցվածքով ու վեհատեսիլ:* Դեմ դիմաց կանգնած էր մի *տղամարդ, որը ծանոթ ժպիտով էր, ժամանակի ճերմակ փոշուց սպիտակած մազերով էր, բայց երիտասարդական առույգ կեցվածքով ու վեհատեսիլ էր:*

Իսկ շաղկապով միավորված բազմակի որոշիչներ՝ Մի արյունոտ լռություն իջել էր *երբեմնի աշխույժ կյանքով ապրող, իսկ այժմ իրական դժոխքի վերածված երկրամասի վրա:* Մի արյունոտ լռություն իջել էր *այն*

[4] **Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոսյան Վ.,** Հայոց լեզու, հ. 2, Ե., 1975, էջ 247:

*երկրամասի վրա, որն ապրում էր երբեմնի աշխույժ կյանքով, իսկ այժմ վերածվել էր իրական դժոխքի:*

Սակայն շաղկապով միավորված բազմակի որոշիչներ՝

| | |
|---|---|
| Կենտ աչքն է ճմլում արևը կրկին՝ | Կենտ աչքն է ճմլում արևը կրկին՝ |
| Պաղ առավոտվա *մաքուր լվացված, սակայն չարդուկված թաշկի-նակամպով* (ՍՊ, 114): | Պաղ առավոտվա *թաշկինակ-ամպով, որ մաքուր լվացվել է, սակայն չի արդուկվել:* |

Կամ շաղկապով միավորված բազմակի որոշիչներ: Այսպիսի բազմակի որոշիչները կարող են փոխակերպվել կամ չփոխակերպվել. դա կախված է որոշիչների խոսքիմասային պատկանելությունից: Օրինակ՝ Աշնանային Երևանի *կարմիր կամ դեղին փողոցները* ինձ իմ անմեղ մանկությունն են հիշեցնում: Աշնանային Երևանի *փողոցները, որ կարմիր են կամ դեղին,* ինձ իմ անմեղ մանկությունն են հիշեցնում: Սա միակերպ ձայնով, երբեմն էլ միայն *այս կամ այն բառը* շեշտելով պատմում էր… (ԶՍ, 101): Այս օրինակը չի փոխակերպվում, քանի որ բազմակի որոշիչներն արտահայտվել են ցուցական դերանուններով:

*Բայց, կամ, սակայն* համադասական շաղկապներով կապակցված բազմակի որոշիչների համեմատաբար շատ ենք հանդիպում, մինչդեռ այդ նույն շաղկապներով կապակցված բարդ համաստորադասական նախադասությունները սակավ են և քիչ գործածական: Օրինակ՝ Ես հանդիպեցի վաղեմի ընկերուհուս, որը շատ էր ծերացել, *սակայն հոգով նույն մանուկն էր մնացել*: Պատանուն խենթացրել էին նրա աչքերը, որոնք մանր էին, *բայց շատ խոսուն*:

Թե շաղկապով միավորված բազմակի որոշիչներ: Այսպիսի բազմակի որոշիչների խումբը սովորաբար երկանդամ է, *թե*-ն միավորական դեր է կատարում և կազմում է ներփակ խումբ: *Թե* շաղկապով միավորված բազմակի որոշիչները կա՛մ չեն փոխակերպվում, կա՛մ էլ փոխակերպվում են ոճական անհարթությամբ: Օրինակ՝ Մարդիկ՝ մեծ թե փոքր, լքում են հայրենին: *Թե* շաղկապը կարող է կրկնվել՝ ստանալով տրոհական նշանակություն՝

| | |
|---|---|
| Զարմանքով գուցե նայես դու իմ այս Գրքի *էջերին՝ թե՛ անշուք, թե՛ պարզ* (ՉԵ, 91): | Զարմանքով գուցե նայես դու իմ այս Գրքի *էջերին, որ թե՛ անշուք են, թե՛ պարզ:* |

Թեպետ, թեպետև, թեկուզ, թեկուզև զիջական շաղկապներով միավորված բազմակի որոշիչները հազվադեպ են պատահում և չեն փոխակերպվում: Օրինակ՝ *Հաճելի կին* էր, *թեկուզև մի քիչ ծերացած:*

Ոչ կրկնադիր շաղկապով միավորված բազմակի որոշիչներ: Բազմակի որոշիչները կարող են միավորվել նաև *ոչ* կրկնադիր շաղկապով: Այսպիսի կապակցությունները, հիմնականում թվականով արտահայտված, հնարավոր չէ փոխակերպել, ինչպես՝ Նայեցին. *ո՛չ առաջին, ո՛չ երկրորդ, ո՛չ էլ երրորդ վրանում* չկար Գաբրիելը (Սիր. Հ, 55):

Առանց շաղկապի միավորվող բազմակի որոշիչները կազմում են աններփակ (բաց) շարք.

| | |
|---|---|
| Կյանքը դարձավ հավերժական | Կյանքը դարձավ հավերժական |

| | |
|---|---|
| մի փնտրում- | մի փնտրում- |
| *Մութ, անհեթեթ, տարօրինակ կյանքը մեր* (ՉԵ, 12): | *Մեր կյանքը, որ մութ էր, որ անհեթեթ էր ու տարօրինակ էր:* |

Եթե բազմակի անշաղկապ որոշիչները երկուսից ավելի են, ապա փոխակերպման ժամանակ վերջին բաղադրիչը կարող է կապակցվել նախորդներին *և, ու* շաղկապներով, ինչպես արված է վերը բերված օրինակում: Իսկ եթե որոշիչների խումբը երկանադամ է, բաղադրիչ նախադասությունները կարող են մնալ նաև անշաղկապ.

| | |
|---|---|
| Այդպես ցողո՛ւնն է հանդում ծանրանում, | Այդպես ցողո՛ւնն է հանդում ծանրանում, |
| Երբ լցվում է *ձույլ, իմաստուն հասկով* (ՉԵ,107): | Երբ լցվում է *հասկով, որ ձույլ է, որ իմաստուն է:* |

Բայց՝ Թագուհին դուրս եկավ *հանդարտ, համաչափ քայլերով:*
Թագուհին դուրս եկավ *քայլերով, որ հանդարտ և համաչափ էին* (ԶՍ, 118):

Տարասեռ որոշիչներ: Տարասեռ են համարվում հիմնականում տարբեր խոսքի մասերով արտահայտված որոշիչները: Տարասեռ որոշիչները բազմակի չեն, արտահայտում են տարբեր սեռային հասկացություններ: Այսպիսի որոշիչները չեն կարող միավորվել որևէ շաղկապով կամ էլ գրության մեջ տրոհվել ստորակետով: Տարասեռ որոշիչները ևս, ըստ փոխակերպելիության, լինում են երեք տեսակ՝ ա) փոխակերպվող. բ) ոճական անհարթությամբ փոխակերպվող. գ) չփոխակերպվող:
Տարածված են հատկապես որակական և հարաբերական ածականներով կապակցությունները, որոնցում որակական ածականը վերաբերում է հարաբերականի գոյականական հիմքին[5]: Օրինակ՝

Թե հրաշքով ճամփաս տանի
Դեպի Եփրատ և մանկություն,
Հոտոտելով քեզ կգտնեմ,
*Հայրենական փոքրիկ* իմ *տուն* (ԴՎ, 58):

Այսպիսի տարասեռ որոշիչները կամ չեն փոխակերպվում, կամ փոխակերպվում են առանձին-առանձին՝ հաճախ կազմելով ոճական անհարթ և գործնականում չկիրառվող կառույցներ, կամ փոխակերպվում է միայն որակական ածականը, իսկ հարաբերականը չի փոխակերպվում: Եթե փորձենք փոխակերպել միաժամանակ բոլոր տարասեռ որոշիչները, կապակցությունը չի փոխակերպվի: Օրինակ՝ Երկար ու կերկեր, իբրև *արևելյան թախծոտ երգ,* ճոնչում էր հին դուռը (ԲԱ, 71): Երկար ու կերկեր, իբրև *թախծոտ երգ, որն արևելյան էր,* ճոնչում էր հին դուռը: Երկար ու կեր-կեր, իբրև *արևելյան երգ, որը թախծոտ էր,* ճոնչում էր հին դուռը:

Եթե որոշյալն ունի *մի, ոչ մի, ամեն, ամբողջ, ողջ, ուրիշ, բոլոր, այսպես, այդպես, ինչ, այս, այդ, որպիսի, ինչպիսի, այնպիսի, նույն* և առհասարակ թվական ու դերանվանական որոշիչներ, դրանք տարասեռ են[6] և փոխա-կերպվում են մասնակիորեն կամ չեն փոխակերպվում:

---

[5] **Քոսյան Վ.,** Ժամանակակից հայերենի նախադասության վերլուծության հարցեր, Ե., 1976, էջ 62:

[6] **Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոսյան Վ.,** նշվ. աշխ., էջ 246:

Թվականով՝ Դռները աղմուկով բացվեցին, ներս վազեցին Ավալյանի զավակները՝ *երկու պղնձագույն էակներ* (Շ, 102): Դռները աղմուկով բացվեցին, ներս վազեցին Ավալյանի զավակները՝ *երկու էակներ, որոնք պղնձագույն էին:*

Դերանունով՝ Գետն աղմկում էր առաջվա հանգով, նույն քարերն էին և *նույն քարե արծիվը* (ԲԱ, 4): Այս օրինակը չի փոխակերպվում, քանի որ երկու որոշիչներն էլ փոխակերպելի չեն:

Տարասեռ են նաև այն որոշիչները, որոնք կապվում են *այսինքն, ըստ որում* բառերով[7]: Այսպիսի որոշիչները չեն փոխակերպվում, կամ էլ փոխակերպվում են մասնակիորեն: Օրինակ՝ Նա երջանիկ ապրում էր *փայտյա, ըստ որում խարխուլ* մի *տնակում:* Նա երջանիկ ապրում էր *փայտյա* մի *տնակում, որը խարխուլ էր:*

Հաճախ նույն որոշյալին լրացնում են տարասեռ և բազմակի որոշիչները միաժամանակ՝ ստեղծելով քերականական բարդ կառույց: Սրանք մասնակիորեն են փոխակերպվում, ինչպես՝

| | |
|---|---|
| *Երկու որբեր՝ մերկ ու տխուր,* | *Երկու որբեր, որ մերկ էին ու տխուր,* |
| Իմ հուշերի ճամփի վրա՝ | Իմ հուշերի ճամփի վրա՝ |
| Դեռ անցնում են հոգնած ու լուռ… (ՇՀ, 56): | Դեռ անցնում են հոգնած ու լուռ: |
| Մի՛շտ, ամե՛ն անգամ պաշարում է քեզ *Նույն զգացումը՝ անձեղք* ու *անդուռ* (ՍՊ, 132): | Մի՛շտ, ամե՛ն անգամ պաշարում է քեզ *Նույն զգացումը, որ անձեղք է* ու *անդուռ:* |

Առաջին օրինակի *մերկ* ու *տխուր* որոշիչները միմյանց նկատմամբ համազոր հարաբերության մեջ են, հետևաբար և բազմակի են, իսկ *երկու* թվական որոշչի հետ կազմում են տարասեռ որոշչի շարք, նույն կերպ և երկրորդ օրինակի *անձեղք* ու *անդուռ* որոշիչները բազմակի են, իսկ *նույն* որոշչի նկատմամբ՝ տարասեռ, քանի որ, ինչպես վերը նշեցինք, թվական և դերանուն որոշիչներն առհասարակ բազմակի որոշիչների շարքի անդամ չեն դառնում:

Տարասեռ որոշիչները նույնպես կարող են արտահայտվել միայն բառերով, միայն բառակապակցություններով կամ էլ բառերի և բառակապակցությունների զուգակցմամբ: Տարասեռ որոշիչները չեն փոխակերպվում: Բայց եթե փորձենք փոխակերպել որոշիչներից միայն մեկը, իսկ մյուսը թողնենք լրացյալի հետ, ապա հնարավոր է, որ տարասեռ որոշիչների մեծ մասը փոխակերպվի: Այս դեպքում փոխակերպվող որոշիչը վերաբերում է ոչ միայն որոշյալին, այլ որոշյալին և մյուս որոշչին միասնաբար: Եթե բոլոր որոշիչները փոխակերպելի են, կունենանք փոխակերպման հնարավոր մի քանի տարբերակ:

Բառով արտահայտված տարասեռ որոշիչներ՝

| | |
|---|---|
| … Որից քիչ անդին ճահիճն է ապրում Իր *հավերժական ինքնածին կյանքով*… (ՍՊ, 10): | Որից քիչ անդին ճահիճն է ապրում Իր *ինքնածին կյանքով, որ հավերժական է:* |

Որից քիչ անդին ճահիճն է ապրում

[7] **Գյուլբուդաղյան Ս.,** նշվ. աշխ., էջ 211:

| | |
|---|---|
| | Իր *հավերժական կյանքով,* |
| | *որ ինքնածին է:* |
| …Կարելի չէ արդյոք «մարդ եմ» բառին | Կարելի չէ արդյոք «մարդ եմ» բառին |
| Չհագցնել *ո՛չ մի նեղ ածական…* (ՍՊ, 215): | Չհագցնել *ո՛չ մի ածական, որը նեղ է:* |

Եվ նրանց մեջ Խոնարհի դեմքը, ցանակապատի փշերի արանքից՝ *երկու մանրիկ աչքեր* (ԲԱ, 35): Եվ նրանց մեջ Խոնարհի դեմքը, ցանակապատի փշերի արանքից՝ *երկու աչքեր, որոնք մանրիկ են:*

Վերը բերված առաջին երկու օրինակն ունեն փոխակերպման հնարավոր երկու տարբերակ, իսկ երրորդ և չորրորդ օրինակները՝ մեկական, որն էլ պայմանավորված է որոշիչների խոսքիմասային պատկանելությամբ:

Բառակապակցությամբ արտահայտված տարասեռ որոշիչներ: Միայն բառակապակցությունով տարասեռ որոշիչներ սակավ են հանդիպում՝ առավելապես դերբայական դարձվածով արտահայտված: Այսպիսի որոշիչները փոխակերպվում են կա՛մ առանձին-առանձին, կա՛մ միաժամանակ՝ ստեղծելով համաստորադասական կառույցներ, կա՛մ էլ չեն փոխակերպվում: Ինչպես՝ Այդ ժամանակ թիկնապահը մոտեցավ ծերունուն և *նրա մոտ կանգնած խեթ նայող երիտասարդին* (ԶՍ, 49): Այդ ժամանակ թիկնապահը մոտեցավ ծերունուն և *խեթ նայող երիտասարդին, որ կանգնել էր նրա մոտ:* Այդ ժամանակ թիկնապահը մոտեցավ ծերունուն և *նրա մոտ կանգնած երիտասարդին, որ խեթ նայում էր:* Այդ ժամանակ թիկնապահը մոտեցավ ծերունուն և *երիտասարդին, որ խեթ նայում էր, որ կանգնել էր նրա մոտ:*

Բառով և բառակապակցությամբ արտահայտված տարասեռ որոշիչներ: Բառի և բառակապակցության զուգակցմամբ տարասեռ որոշիչներ հաճախ են հանդիպում: Սրանք ևս կարող են փոխակերպվել նախորդի պես, կամ չփոխակերպվել: Օրինակ՝ *Ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին* մանուշակը ճոճք էր թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան (ԲԱ, 4): *Գունավոր բզեզին, որ թաթախվել էր ծաղկափոշու մեջ,* մանուշակը ճոճք էր թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան: *Ծաղկափոշու մեջ թաթախված բզեզին, որ գունավոր էր,* մանուշակը ճոճք էր թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան: *Բզեզին, որ գունավոր էր, որ թաթախվել էր ծաղկափոշու մեջ,* մանուշակը ճոճք էր թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան: Այլ օրինակներ՝ Մոխրագույն շորեր ուներ, գլխին՝ *տանը գործած բրդե շալ* (ԲԱ, 27): Մոխրագույն շորեր ուներ, գլխին՝ *բրդե շալ, որ տանն էին գործել:* Մի փոքր հեռու երևաց նաև *ամրոցը շրջապատող քարե պարիսպը* (ԶՍ, 123): Մի փոքր հեռու երևաց նաև *քարե պարիսպը, որ շրջապատում էր ամրոցը:* Վերջին երկու օրինակը մասամբ են փոխակերպվում, քանի որ մյուս որոշիչները հարաբերական ածականով են արտահայտված, որ փոխակերպելի չէ:

Տարասեռ որոշիչները ևս կարող են լինել բազմանդամ: Այս դեպքում փոխակերպման հնարավոր դեպքերը կավելանան, իսկ փոխակերպված

նախադասությունը կլինի բազմաբարդ ստորադասական նախադասություն: Ինչպես, օրինակ՝ Նա լռեց մի վայրկյան, նորից դիտեց *առջևը կանգնած երեք առողջ տղամարդկանց* և ակներև գոհ մնաց (ԶՍ, 85): Նա լռեց մի վայրկյան, նորից դիտեց *երեք առողջ տղամարդկանց, որ կանգնել էին առջևը,* և ակներև գոհ մնաց: Նա լռեց մի վայրկյան, նորից դիտեց *առջևը կանգնած երեք տղամարդկանց, որոնք առողջ էին,* և ակներև գոհ մնաց: Նա լռեց մի վայրկյան, նորից դիտեց *առջևը կանգնած առողջ տղամարդկանց, որ երեքն էին* [8], և ակներև գոհ մնաց: Նա լռեց մի վայրկյան, նորից դիտեց *տղամարդկանց, որոնք կանգնել էին առջևը, որոնք առողջ էին, որոնք երեքն էին,* և ակներև գոհ մնաց:

Ի տարբերություն բազմակի որոշիչների՝ տարասեռ որոշիչները, բացի երեք հնարավոր տարբերակներից, կարող են փոխակերպվել մասամբ:

Ինչպես տեսանք, նախադասության նույն անդամին լրացնող բազմակի (համասեռ) և տարասեռ որոշիչները փոխակերպելիության տարբեր օրինաչափություններ են հանդես բերում:

Եթե միևնույն որոշյալը ունի մեկից ավելի տարասեռ որոշիչներ, դրանցից յուրաքանչյուրի փոխակերպման հարցը որոշվում է առանձին, ինչի հետևանքով ստացվում է որոշիչների շարքի փոխակերպման երեք տարբերակ. 1) փոխակերպվում է ամբողջ շարքը, 2) փոխակերպվում է շարքի մի մասը, 3) շարքն ամբողջությամբ չի փոխակերպվում: Մինչդեռ բազմակի որոշիչները փոխակերպելիության միասնություն են հանդես բերում, այսինքն՝ մտնում են միևնույն խմբի մեջ:

Բազմակի որոշիչները կարող են արտահայտված լինել թե՛ միայն բառերով, թե՛ միայն բառակապակցություններով, թե՛ այս երկուսի զուգակցումով, որոնց միաժամանակյա փոխակերպման հետևանքով ստացվում են բարդ համաստորադասական նախադասություններ:

Շաղկապով միավորված բազմակի որոշիչները փոխակերպելիս շաղկապը կարող է չպահպանվել, կարող է պահպանվել՝ դրվելով ստորադաս բաղադրիչ նախադասությունների միջև:

*Եվ, ու, բայց, սակայն, իսկ* շաղկապներով կապակցված բազմակի որոշիչները փոխակերպվում են: *Թե, կամ* շաղկապներով միավորված բազմակի որոշիչները կա՛մ չեն փոխակերպվում, կա՛մ էլ փոխակերպվում են ոճական անհարթությամբ: *Թեպետ, թեպետև, թեկուզ, թեկուզև* զիջական շաղկապներով և *ո՛չ…, ո՛չ…* կրկնադիր շաղկապով միավորված բազմակի որոշիչներ հազվադեպ են պատահում և չեն փոխակերպվում:

Տարասեռ որոշիչները ևս կարող են արտահայտված լինել միայն բառերով, միայն բառակապակցություններով, կամ էլ բառերի և բառակապակցությունների զուգակցմամբ: Տարասեռ որոշիչները չեն փոխակերպվում: Բայց եթե փոխակերպվող որոշիչը վերաբերում է ոչ թե միայն որոշյալին, այլ որոշյալին և մյուս որոշչին միասնաբար, ապա հնարավոր է փոխա-

---

[8] Թվական որոշիչը (ն որոշյալ հոդի հավելումով) հնարավոր է փոխակերպել, մանրա-մասն տե՛ս **Մխիթարյան Ա.,** Բառով, բառակապակցությամբ և նախադասությամբ արտա-հայտված որոշիչների և նրանց փոխակերպման քերականաոճական քննություն, Ե., 2007, էջ 50, 65:

կերպել որոշիչներից միայն մեկը՝ մյուսը թողնելով լրացյալի հետ: Եթե բոլոր որոշիչները փոխակերպելի են, կունենանք փոխակերպման հնարավոր մի քանի տարբերակ: Հաճախ նույն որոշյալին լրացնում են տարասեռ և բազմակի որոշիչները միաժամանակ՝ ստեղծելով քերականական բարդ կառույց: Սրանք մասնակիորեն են փոխակերպվում:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՎ - Անանյան Վախթանգ, Երկեր, հ. 6, Հովազաձորի զերիները, Ե., 1971:
ԲԱ - Բակունց Ակսել, Ալպիական մանուշակ, Ե., 1969:
ԴՎ - Դավթյան Վահագն, Ծննդավայր, Ե., 1988:
ԶՍ - Զորյան Ստեփան, Հայոց բերդը, Ե., 1959:
ԽՍ - Խանզադյան Սերո, Հողը, Ե., 1957:
Մ - Մուրացան, Երկեր, գիրք Բ, Գևորգ Մարզպետունի, Ե., 1970:
Շ - Շիրվանզադե, Պատմվածքներ, Ե., 1986:
ՇՀ - Շիրազ Հովհ., Հատընտիր, Ե., 1992:
ՉԵ - Չարենց Եղիշե, Երկեր, Ե., 1954:
ՍՀ - Սահյան Համո, Երկերի ժողովածու, հ. 1, Ե., 1975:
Սիր.Հ - Սիրաս Հմայակ, Անանուն աղջիկ, Ե, 1969:
ՍՊ - Սևակ Պարույր, Եղիցի լույս, Ե.,1992:
Ր - Ռաֆֆի, Պատմվածքներ, Ե., 1986:

## ТРАНСФОРМАЦИЯ ОПРЕДЕЛЕНИЙ, ВЫРАЖЕННЫХ СЛОВОМ И СЛОВОСОЧЕТАНИЯМИ, ОТНОСЯЩИМИСЯ К ОДНОМУ И ТОМУ ЖЕ ОПРЕДЕЛЯЕМОМУ СЛОВУ

**МХИТАРЯН А. М.**

**Резюме**

Однородные определения выполняют одну и ту же синтаксическую роль, отвечая на один и тот же вопрос; они могут быть двучленными либо многочленными в зависимости от числа компонентов. Однородные определения могут быть соединены каким-либо сочинительным союзом либо фонетически (а в письменной речи могут быть выделены запятыми). Разнородные определения выражают разные родовые понятия, хотя и отвечают на один и тот же вопрос, дополняя тот же член предложения, выполняя такую же синтаксическую роль. Подобные определения не могут быть соединены союзами и выделены запятыми.